# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների անվտանգության ոլորտում ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՄԱԾՁԲ-23/16» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի ապրիլի 26-ին կնքված N «ԴԴ-ՄԱԾՁԲ-23/16» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2023 թվականի դեկտեմբերի 5-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում:

Փոփոխության նկարագրություն՝

- Պայմանագրի 4.1 կետում «3 940 000 (երեք միլիոն ինը հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինվել են «2 285 200 (երկու միլիոն երկու հարյուր ութսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ» բառերով,
- Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ում «տեխնիկական բնութագիրը» սյունակում «100 անձ» բառերը փոխարինվել են «58 անձ» բառերով,
- Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 և 7.8 կետեր

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ 26.04.2023թ. N «ԴԴ-ՄԱԾՁԲ-23/16» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «05» «12» 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը, ի դեմս պետ, ոստիկանության գնդապետ Մ. Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 26.04.2023թ. կնքված N «ԴԴ-ՄԱԾՁԲ-23/16» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի համաձայնությունը՝ 42 անձի դադասավանդման մասով ֆինանսական հատկացումների նվազեցման, Պայմանագրի գնի փոփոխության (նվազեցման), ինչպես նաև Պայմանագիրը մասնակի լուծելու վերաբերյալ, Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի 4.1 կետում «3 940 000 (երեք միլիոն ինը հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «2 285 200 (երկու միլիոն երկու հարյուր ութսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ» բառերով,

1.2. Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ում «տեխնիկական բնութագիրը» սյունակում «100 անձ» բառերը փոխարինել «58 անձ» բառերով,

1.3. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***«Հայաստանի Հանրապետության ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փ. 29 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 01806293 |
| Հ/Հ՝ 900011039808 | Հ/Հ՝ 900018005018 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| **Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան** | **Պետ, ոստիկանության գնդապետ Մ. Մուրադյան** |
| ------------------------------ (ստորագրություն) Կ.Տ. | ------------------------------ (ստորագրություն) Կ.Տ. |

**Հավելված N 1**
**« 05 » « 12 » 2023թ. կնքված N 1 համաձայնագրի**

*(Հավելված N 2*
*«26» «04» 2023թ. կնքված*
*«ԴԴ-ՄԱԾՁԲ-23/16» ծածկագրով պայմանագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ծառայության | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | |
| | | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 80551100/1 | ուսուցման ծառայություններ անվտանգության ոլորտում | | | | | | | | 2 285 200 | 2 285 200 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011039808
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Ղեկավարի պարտականությունները**
**կատարող՝ Ն. Գալստյան**

---------------------------------------
(ստորագրություն) Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
***«Հայաստանի Հանրապետության ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ***
Հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փ. 29
ՀՎՀՀ՝ 01806293
Հ/Հ՝ 900018005018
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Պետ, ոստիկանության գնդապետ**
**Մ. Մուրադյան**

---------------------------------------
(ստորագրություն) Կ.Տ.